

## ՈՒՍՄԱՆ ՀԱՐԿԱԻՌՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՀԱՄԱՐ

Ա.

«Ամենայն չարիք՝ յանուսումնութենէ՝ կըսէր մեր հին ու իմաստուն հեղինակներէն մէկը: — Այնպիսի բացայայտ ճշմարտութիւն մըն է այս որ ապացուցի կարօտութիւն չունի: Ո՛չ ապաքէն ամէն օր մեր աչքին դիմացն ունիմք դորա տխուր փորձը:

Թէ որ կայ ազգ մը որ անուսումնութեան չարեաց ամենայն ցաւալի հետեւանքները ակնյայտնի տեսած ու փորձած լինի, անտարակոյս մեր ազգն է այդ: Ի վաղուց հետէ կշտամբուէր եմք մեր ունեցած ուսման պաղութեանը համար: Ուսումնատեցութիւնը կարծես բարձր մը դարձեր է մեր ազգին, բարձր՝ որ որդւոց յորդի իջեր մինչեւ մեզ հասեր է իբրեւ իժառանգութիւն: — Եւ ինչ հին ժառանգութիւն . . . . .

Ահա ճշմարտապատումն Մովսէս՝ իբրեւ բարձր կյիշէ զայդ իւր ժամանակն անգամ. «Անիմաստասէր բարձր առաջնոցն մերոց»:

Ինքն անգամ իբրեւ տխուր ժառանգութիւն մը զայն կմտածէ, որ անդուստ ինախնեաց անտի մինչեւ իւր ժամանակն էր իջեր: Եւ զայն ոչ իբրեւ իւր առանձնական կարծիքը մէջ կըրէ, այլ սրտառուչ կերպով կազաղակէ թէ «Ամենեցուն յայտնի է»:

Հազար չորսհարիւր տարի է անոր վրան անցեր, Հայը այսչափ երկար ժամանակի մէջ իւր բարձրն շատ լաւ յատկութիւններ է փոխեր կամ կորսնցուցեր, բայց, — ցաւով կըզուրցեմ, — «ուսումնատեաց բարձր» . . . . .

Այսօրուան օրս ալ կրնար Խորենեան ազատ ու ճշմարտաբան բերանը ազաղակել բողոքել ընդդէմ տգիտութեան ազգիս, որ թանձր մառախուղի մը պէս չորս կողմերնիս պատած է ու չթողուր որ գիտութեան լոյսը տեսնեմք ու լուսաւորուիմք:

Արգեօք այսօրուան օրս ալ այն վշտահար Ծերունին տեսնելով որ իւր արտասուօք կտրտած ձայնը չուղեր ոք լսել, պիտի չփակէր իւր վսեմախօս բերանը, ու Մովսիսեան լուսափայլ գլուխը վերարկուին տակ ծածկելով՝ չէր հռաչեր, թէ «Աւելորդ է մեզ եւ այլ անբանից արանց թուլամտաց վայրենեաց ճառել . . . յականջս խօսեցեալ մեռելոց» . . .

Բայց որչափ ալ պարտաւելի էր ու կըշտամբելի մեր նախնեաց ուսումնատեցութիւնը, կարծեմ՝ դեռ կրնար արդարանալ մեր ուսումնատեցութեան առջեւ:

Այն ատենները՝ ուսմունքն ու գիտութիւնն ոչ հիմակուան պէս ծաղկած էին ու առաջ գնացած, եւ ոչ ալ հիմակուան ժամանակիս պէս ամէն տեղ ծաւալած ընդհանուր եղած: Կուգեմ ըսել, թէ մեր նախնիք չէին կրնար ոչ մեղի պէս ուսմանց օգուտն ու հարկաւորութիւնը տեսնել եւ ըմբռնել, եւ ոչ ալ կրնային մեղի պէս գիւրութեամբ հաղորդելնել ուսմանց եւ գիտութեանց արեգակնափայլ լուսոյն, եւ կամ վայելել անոր սքանչելի պարգեւները:

Եթէ հայրասէր որդւոյ մը պարտքն է Սեմայ ու Յաբեթի պէս հօրն անարգութիւնն ու նախատինքը ծածկել, ո՞րչափ եւս առաւել պարտքն է որ իւր անձին վրայ զանոնք չցուցընէ: Սոյն վիճակի մէջն եմք մեք այժմ:

Թէ որ չեմք կրնար ջնջել մոռցընել տալ մեր նախնեաց ամօթը, բայց կարող եմք մեր փառօքը նոցա նախատինքը ծածկել: Վեհ է այս փառքը. անոր ետեւէն պնդիմք:

Բարձր միշտ կրնայ շտկուիլ կոկուիլ ու փոխուիլ, որչափ ալ հին ըլլայ եւ ախտաւոր: Ապա թէ ոչ՝ պէտք էր յուսահատիլ Դաստիարակութեան վրայ:

Հին է ըսինք եւ այս « Ուսումնաստեցութեան բարբը » Հայոց մէջ. — Ժամանակն է որ մեք ալ ազազակեմք եղբայր առ եղբայր թէ « Հինն էանց, եւ արդ նոր եղեւ ամենայն »: (Բ Կոր. Է, 17):

Բ.

Բայց քիչ մ'ալ այն նայիմք թէ ինչո՞ւ պիտի ատելի ըլլայ մեզ ուսումն եւ իմաստութիւն, մինչեւ՝ Ուսումնաստեց եւ Անխնասասէր անունները իբրեւ սեփական բան մը վրանիս գրուի:

Երբ կ'մտածեմ գիտութեան եւ իմաստութեան գեղեցկութիւնն ու հարկաւորութիւնը, եւ բերած մեծամեծ օգուտները՝ չեմ կրնար հասկընալ թէ ինչպէս կարելի է չըսիրել զնա ու ետեւէն չիյնալ:

Չեմ զարմանար որ մեծ թագաւոր մը՝ որուն գիմաց կ'զնէր ամենազօր կարողութիւն մը զամենայն որ ինչ հաճոյ ու բաղձալի կերելի մահացուի մը առջեւ, ինքը նախամեծար ընտրած ըլլայ զիմաստութիւն քան զիշխանութիւնս եւ զաթոռս. ոչ ինչ համարած ըլլայ զմեծութիւն առ համեմատութեամբ նորա. ու սիրած ըլլայ զայն քան զառողջութիւն եւ զգեղեցկութիւն, վասն զի, ինչպէս ինքնին կ'ստատովանի, իմաստութեան քով ամենայն օսկի՝ ափ մը աւազ է, ու արծաթը՝ կաւի մը կտոր առաջի նորա: Արեւէն աւելի գեղեցիկ՝ եւ լուսոյ ալ յաղթող է, կըսէ, Իմաստութիւն. վասն զի լուսոյ ետեւէն գիշեր կուգայ. բայց Իմաստութիւնը՝ Աստուծոյ ճաճանչն է, ուր որ ինքը կ'ծագի՝ ամէն բարութիւն իրեն հետ մէկտեղ կ'բերէ. իւր ձեռքն են անթիւ մեծութիւնք:

Ո՛չ, չեմ զարմանար թէ ինչպէս կրնայ որ քան զանցանելի մեծութիւնս սիրել զայն՝ որ ոչ երբէք կանցնի, ու Յաւիտենականու-

թեան հետ է աթոռակից: Հապա կ'զարմանամ որ ինչպէս կարելի է արգօք չսիրել զնա (ԱնիՄԱՍՏԱՍԷՐ...) մանաւանդ թէ ըսեմ եւ ատել. (ՈՒՍՈՒՄՆԱՏԵԱՅ):

Այն բանն որ լաւ է ու բարի՝ չեմք կրնար չյարգել ու չգովել: Այն բանն որ գեղեցիկ է իբնէ ու սիրելի՝ չեմք կրնար չսիրել ու չփափաքիլ, բայց եթէ՝ երբ կրիւք զգածեալ է մեր նկատողութիւնը, կամ մտաց աչքին առջեւ միտարբներ պատած՝ լուսոյն յստակութեանը նայելու արգելք կըլլան, կըսէ Հայ մեծ փիլիսոփայ մը:

Երբ տեսնելու ըլլայինք՝ կճանչնայինք. երբ ճանչնայինք՝ հարկաւ նաեւ պիտի սիրէինք: Ապա ուրեմն եթէ եւ զիմաստութիւն չեմք սիրեր՝ ըսել է թէ եւ չեմք ճանաչեր:

Չեմք ճանաչեր իւր լուսաւոր եւ լուսաբեր բնութիւնը. չեմք ճանաչեր իւր աննման գերազանցութիւնը, չեմք ճանաչեր իւր անհրաժեշտ պիտանաւորութիւնը, չեմք ճանաչեր իւր բազմաբիւր օգուտները:

Այո՛, եթէ մեր ազգը հասկըցած ըլլար Ուսման անթիւ օգուտները՝ այսպէս անհոգ չէր ըլլար անոր ստացմանը վրայ: Այլ՝ ո՛ր եւ իցէ աշխատութիւն յանձն կառնուր՝ զայն ձեռք բերելու համար, վասն զի անով Իմաստնոյն ըսածին պէս՝ ձեռք կ'բերէր միանգամայն զամենայն բարութիւն եւ զամենայն մեծութիւն:

Առակը կըսէ թէ աքաղաղը (խորոզ) մարդրիտ մը գտնելով մէկգի նետեց՝ ու կհառաչէր. « Ո՛ւր էր թէ կուտ մը ցորեն գտած ըլլայի »: — Բայց մարդիկ՝ որ մարդրտին յարգը գիտեն՝ աքաղաղին պէս չեն մտածեր: Այլքներու ու մահուան հետ կ'կռուին առ իձեռս բերել զայն: Ուրիշներ ալ գանձեր կուտան անով զարգարուելու:

